

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

ՆՈՐ ՏԱՐԻ ԵՆՈՐ ԱՄԱՐԻ ԱՍԻՏԵՐԷՂ



Մեր ՅԱՐՈՒԴ ԹԻՈՂ
Ուրբաթ, 17 Յունուար
2003

«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ ԹԻՈՂ 9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002 bezdig_mezdig@hotmail.com

ՆՈՐ ՏԱՐԻ՝ ՆՈՐ ԱՌԻԹՅԵՐ

2002 թուականը շատ կարեւոր էր «Պպտիկ-Մպտիկ»ին համար: Նախ, բնականաբար, որովհետեւ ան ճնաւ, իր շուրջ հաւաքեց ծեփ՝ ոչ միայն ևարդալը սիրող, այլ նաեւ գրելու, լսելու եւ խաղեր ու հանելուկներ կատրաստելու ծիրք ունեցող փոքրիկներդ: Ձեզ ուրախացուց իր ջերով եւ ձեր ուշադիր ընթերցումն ինքն ալ ուրախացաւ: Ամիսներու ընթացքին «Պպտիկ-Մպտիկ» ձգի նման մեծցաւ, կորացաւ եւ րցաւ կազմակերպել իր առաջին մյուսը՝ ուղղագրութեան «Անսխալ ղենք»ը:

«Պպտիկ-Մպտիկ»ի խմբագրական կազմն համար մեծ ուրախութիւն է տեսնել կիրակի, 15 Դեկտեմբեր 2002ի առաւօտուն «Յակոբ Տր Մելքոնեան» թատերասրահ հաւաքուած աւելի քան երկու հարւարշակերտներուն ուրախ ու ժպուն դէմքերը: Կը մաղթենք, որ յորթի էջերէն դուրս այս առաջին հանդիպումին յաջորդեն ուրիշներ:

Մինչեւ յջորդ հանդիպում, բոլորին Յնոխաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնոդ:



ՆՈՐ ՏԱՐԻ՝ ՆՈՐ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԻՆՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

365 կամ 366 օրեր անցնելէ ետք, տարին կը սիրէ նորոգուիլ: Բետեաբար ան 1 Յունուարին ինքզինք կը կոչէ Նոր Տարի կամ Ամանոր: Մենք, այ, մեճ ու փոքր, աղջիկ ու տղայ տարուան կատարած նորոգութեան նայելով կ'ուզենք նորոգուիլ: Նոր հագուստներ ու կօշիկներ կը գնենք, տունն ու դասարանը նոր ձեւով կը վարդարենք, նոր խոստումներ կու տանք մեր ճնողներուն եւ ուսուցիչներուն, նոր թուական մը կ'ապրինք...: Այս բոլորը կ'ընենք, որովհետեւ կը սիրենք նորն ու նորութիւնը:



Ծաղիկ հաւաքեան, Ազգ. Ե. Մանուկեան Քոլէճ, Յ տարեկան

Սակայն բնաւ չենք անդրադառնար, որ այս նորութիւններուն կողքին, Նոր Տարին ունի սովորութիւններ, որոնցմէ չի կրնար ձերբազատիլ: Ամէն տարի 31 Դեկտեմբերին կը տօնենք հին տարուան յիշատակները, իսկ 1 Յունուարին կը դիմաւորենք նորը: Կաղանդ Պապուկը ամէն տարի կը հագնի կարմիր հագուստը, վանգակը ձեռքը կ'առնէ, իսկ նուէրներու տոպրակը ուսին կը նետէ: Ամէն տարի մեզմէ կը սպասէ, որ տօնաճառ մը վարդարենք: Այսինքն նորութեան կողքին Նոր Տարին կը պահէ աւանդութիւնները, հինէն եկած սովորութիւնները եւ բնաւ չ'ըսեր. «Ինչ ամօթ է հին սովորութիւնները պահելը: Այս տարի կաղանդ Պապային ըսեմ, որ փոքրիկներուն նուէրներ չբաժնէ»:

Գիտէք՝ Նոր Տարին ըրածը ծիջդ է: Իր հին սովորութիւնները պահելով հանդերձ, նորերը կ'ընդունի: Մենք ալ պէտք է իր օրինակին հետեւինք եւ չմոռնանք հայկական քանի մը սովորութիւնները՝ միրգերով ծոխացնել կաղանդի սեղանը, կէս գիշերին ընտանիքի բոլոր անդամներով աղօթել եւ բարի խնդրանքներու փափաքով Աստուծոյ դիմել, անարատ սրտով իրարու բարեմաղթութիւններ կատարել, նուէրներ ստանալու կողքին՝ փոքր նուէրներով ուրախացնել մեր բարեկամները, եթէ կարելիութիւնը կայ, ցանուած ճառ մը վարդարել եւ վայն պահել 40 օր, մինչեւ Տեառնընդառաջ, որպէսզի վայն եկեղեցի տանելով՝ մասնակից ըլլանք խարոյկի յաւելեալ բորբոքումին:

Այս բոլոր սովորութիւնները կարողութիւնը ունին մեզ հայ պահելու եւ մեր միջեւ տաքուկ մթնոլորտ մը ստեղծելու:

Բարի՛ կաղանդ եւ Ամանոր:

«ԱՆՍՈՒԱԿՐԵՆՔ» ՄՐՅՈՒՄԻՆ ԱՌԻՒՆՔՆԵՐԸ


•6րդ դասարանէն անսխալ գրած է ՆԱԹԱՃԱ - ԱՐԱՔ ՊԱՊՁԵՃԵԱՆ (Ճեմարան):

•5րդ դասարանէն լաւագոյն արդիւնք արձանագրած են ՌԱԶԻԿ - ԲՐԱԿ ՏԵՄԻՊԵԱՆ եւ ԾՈՂԵՐ ՅՈՎ-ԲԱՆՆԵՍԵԱՆ (Ճեմարան), մէկական սխալ:

•4րդ դասարանէն լաւագոյն արդիւնք ձեռք ձգած են ՆԻԿՈՂՈՍ ԳԱԼՍՅՅԵԱՆ (Ե. Մանուկեան) եւ ՍՈՒՐԵՆ ԹԱՊԵԱՆ (Ճեմարան), մէկական սխալ:

Անոնք իրեն նուէրները ստանալու համար կրնան արկայնալ «Ազգակր»ի խմբագրատուն:

ملحق أزيك





«ԱՆՍԻԱԼ ԳՐԵՆՔ» ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՐՅՈՒՄԸ ԵՊԱԻ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ. ԻԱՅ ԱԾԱԿԵՐՏՆԵՐԸ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՄՐՅՈՒՄԻՆ ԵՒ ԱՐՏԱՅԱՅՑԵՑԻՆ ԻԱՅԵՐԷՆԻՆ ԻԱՆԴՊ ԻՐԵՆՑ ՍԵՐԸ

«Պլտիկ-Մվտիկ» մեծ ուրախութեամբ կը դիմաւորէ հայ մանուկներու կողմէ իրեն հասած գրութիւնները: Սակայն անոր նոյնքան ուրախութիւն կը պատճառեն անսխալ կամ գրեթէ անսխալ լեզուով հասած գրութիւնները, որովհետեւ լեզու մը լաւ գիտնալու եւ անոր միջոցով միտք մը յստակ կերպով արտայայտելու համար շատ կարեւոր է նաեւ ճիշդ գրելը: Իսկ, ինչպէս արդէն գիտէք, հայերէնը, բազմա-



թիւ այլ լեզուներու նման, ունի իրարու նման հնչուող, սակայն տարբեր իմաստ ունեցող բառեր: Արագ օրինակներ տալու համար նշենք «բակ» եւ «փակ», «փառք» եւ «բարք», «գայլ» եւ «քայլ» եւ բազմաթիւ այլ բառեր: Երեւակայենք, թէ պիտի ըսենք «Քայլ կը պահէ նորութիւններու հետ», այսինքն՝ նորութիւններէն տեղեակ է, գիտէ վանոնք: Եթէ ուղղագրական փոքրիկ սխալով մը այս միտքը գրենք այսպէս՝ «Գայլ կը պահէ...», ինչ եղաւ նախադասութեան իմաստը: Անտառի չար գաճլն է պահուողը:

Վստահաբար բոլորդ դպրոցներուն մէջ ուղղագրութեան վանապան ձեւի փորձեր կը կատարէք: Սակայն անոնք կը մնան դաս: «Պլտիկ-Մվտիկ» որոշեց, որ ինչքան



ոչ, հայերէնի ուղղագրութեան համար ալ, շարադրութեան, արտասանութեան, երգի կամ նկարչութեան մրցումներու նման մրցում մը կազմակերպուի: Այսպիսով հայ աշակերտները կ'ունենան նոր փորձառութիւն մը՝ հաճելի միախառնելով օգտակարին: Այս նպատակով անցնող շաբաթներուն յայտարարութիւններ եղան, որոնց պատասխանեցին լիբանանահայ 14 վարժարաններու նախակրթարանի 4րդ, 5րդ եւ 6րդ դասարաններու (9-11 տարեկան) 209 աշակերտներ:

Ուղղագրութեան «Անսխալ գրենք» մրցումին որմապդին վրայ մեծ ախորժակով գրող «Պլտիկ-Մվտիկը» անպայմանօրէն քաջալերած է իր ընկերները: Վերջապէս հասաւ սպասուած օրը: Կի-




րակի, 15 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 8:00էն իսկ ժպտուն դէմքերով եւ պայծառ աչուկներով աշակերտներ, իրենց ծնողներուն եւ ուսուցիչներուն ընկերակցութեամբ, հասած էին «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահ: «Անսխալ գրենք»-ին երեք մասերը յաջորդաբար տեղի ունեցան առաւօտեան ժամը 9:00ին (4րդ դասարանին համար), ժամը 10:00ին, (5րդ դասարանին համար) եւ ժամը 11:00ին (6րդ դասարանին համար):

Ծատ գնահատելի է ուղղագրութեան մըր-



ցումին մասնակցած բոլոր աշակերտներուն լրջութիւնն ու սերը լրենց մայրենի լեզուին նկատմամբ: Առաջն անգամ տեղի ունեցող այս մրցումը թեւ սկիպք թիչ մը վախուցեց էր աշակերտները (որոնք տեղեակ չէին ուղղագրութեան նիւթէն), սակայն մրցումին աւարտն անոնք ինքնավստահութեամբ յայտարարեցին, թէ շատ դիւրին ու հաճելի փորձառութիւն մը եղաւ «Անսխալ գրենք»-ը:

Ուղղագրութիւնը վերացնող աշակերտները սրահին մուտին, հիւրասիրութեան ընթացքին, դիտեցին իրենց եւ իրենց դասընկերներուն ճագրութիւններուն ցուցահանդէսը, պրոսեցին «Անսխալ գրենք»-ին մասին, ստաան յիշատակի նուէրներ (Պատմական հիշատանի ատ-



լաս, գիրքեր, գրիչ եւ «Պլտիկ-Մվտիկ»-ի փակցնելիքներ): Անոնք տահէն հեռացան «Պլտիկ-Մվտիկ»-ի «Անսխալ գրենք»-ին դարձեալ մասնակցելու խոստումներով:



ՓՈՔՐԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ՈՒ ԴԵՐԱՍԱՆՈՒԹԻՒՆԵՐ ԿՐ ՊԱՏՄԵՆ ԱՆՆԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ամերիկեան թատրոնի բեմերուն վրայ երկար տարիներ ներկայացուած եւ յետոյ երկու անգամ ժպաւէնի վերածուած «Աննի» թատերախաղը շատ սիրուած է թէ՛ մեծերուն եւ թէ՛ փոքրերուն կողմէ: Որբուկ աղջնակի մը՝ Աննիին պատմութիւնը պատմուեցաւ նաեւ լիբանանահայրեմէն, երբ Թէքէեան Ուսանողակալ թատերախումբը Նոյեմբերին եւհեկտեմբերին ներկայացուց «Անի» թատերախաղը:



ու չար տնօրէնուհիի մը «խնամքին» ձգուած որբուկները ունին ուրախանալու մէկ պատճառ՝ իրարու ընկերութիւնը: Անոնց սիրելին է Աննին, որ հոգ կը տանի բոլորին հանգստութեան: Սակայն Աննի ինքզինք տարբեր կը պգայ իր ընկերներէն, որովհետեւ կը հաւատայ, որ իր հայրն ու մայրը մեռած չեն եւ օր մը անպայման պիտի գան պինք տուն տանելու: Փոքրիկն Աննիին համար ուրախ օրեր կը

հետաքրքրակն է, որ Գրիգոր Տէկիրմէնձեանի բեմադրած այս երգախառն ուպարային թատերախաղին դերասաններուն մեծ մասը երեխանր ու պատանիներ են: Երեք չափահաս դերասաններու շուրջ հաւաքուած այս քսանվեց փոքրիկ ու պատանի դերասաննրն ու դերասանուհիները խանդավառութեամբ ներկայացուցին Աննիի պատմութիւնը՝ բեմին վրայ վերածուելով որբուկ Աննիի՝ որբանոցի անոր ընկերներուն եւ փողոցային չարածձի տղեկերու:

սկսին, երբ մեծահարուստ Օլիվըր Կաղանդի առփթով պայն իր տունը կը տանի: Սակայն Աննի իր ուրախութեան մէջ չի մոռնար որբանոցի իր ընկերները:

«Աննի»ի դերասանները յաճախ իրարու հետ կը խօսին երգերու միջոցով: Անոնք իրենց պգայումները կ'արտայայտեն երգերուն թառերով եւ պարերուն շարժումներով:

Կը մնայ մաղթել, որ այս փոքրիկ դերասանները ապագային եւս դերեր ստանձնեն ու իրենց տարեկից, ինչպէս նաեւ մեծ հանդիսատեսներուն ներկայացնեն գեղեցիկ պատմութիւններ:

Ինչ ու աղքատիկ որբանոցի մը մէջ հաւաքուած եւ անսիրտ

ՃԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ԱՃԽԱՐԻՔԷՆ

● «*Իերի Փրոր էնտ տը չէյմպըր աֆ սիթրըթըյ*»

Վերջապէս հապարակ իջաւ մանուկներու սիրելի կրօսին վերածուած Իերի Փոթըրին պաճախնդրութիւններուն երկրորդ ժապաւնը: «Իերի Փոթըր էնտ տը չէյմպըր աֆ սիթրըթըյ»ի մէջ պատանի Իերին (Ռիչըրտ Էտթլիֆ) կը վերադառնայ կախարդութեան հոկըրթ վարժարանը, սակայն այս տղի եւս դժուարութիւններ ու խորհրդաւոր դէպքեր կը սպասեն անոր: Խորհրդոր թզուկ մը կը պգուշայնէ Իերին խտանգներէն, սակայն

խորհրդաւոր եւ աներեւոյթ սենեակէ մը եկած ձայները պատճառ կը դառնան, որ Իերին իր ընկերներուն՝ հըմոնիի (Էմա Ուաթսըն) եւ Ռոնի (Ռուփըրթ Կրիմթ) հետ մէջտեղ հանէ սենեակին գաղտնիքը:

● «*Մոհամմէտ, տը լասթ փրոֆէթ*»

Այս կենդանի գճանկարը կը ներկայացնէ Մոհամմէտ մարգարէին կեանքը եւ ապրած ժամանակը: 14 դար առաջ Մեքքէի բնակիչները կ'ապրէին անօրէն կեանք մը, իսկ իշխանները բնաւ չէին մտածեր աղքատ ժողովուրդին կեանքը բարելաւելու մասին: Այս բոլորին դէմ կը կենայ Մոհամմէտ եւ կը քարոզէ մէկ Աստուծոյ կրօնը:

● «*Թրէժըր փլանէթ*»

Տիպնիի այս նոր կենդանի գճանկարը գանձերու կղզիի հեքիաթին փոխարէն կը ներկայացնէ... գանձերու մոլորակը: Ճիմ իր աղքատ մօր հետ կ'ապրի այլ մոլորակի մը վրայ: Օր մը անակնկալօրէն անոր ձեռքը կ'անցնի գանձերու մոլորակին քարտէսը եւ ան կ'որոշէ երթալ ու գտնել



այդ գանձը: Սակայն մոլորակէ մոլորակ անոր ճամբորդութեան ընթացքին նաւը կը գրաւուի օդահէններու կողմէ: Արկաճախնդրական ժապաւէն մը:

● «*Լայթ Մայք*»

Տասնչորս տարեկան Քէլվին (Ճոնըթըն Լիփնիթի) ունի մէկ երապ. դառնալ պաքթթայոլի աստղ: Սակայն ան կարծահասակ եւ մանրակապմ է: Անոր կեանքը ամբողջովին կը փոխուի, երբ օր մը կը գտնէ Վոյա մը մարպանքի հին կօշիկներ, որոնց շնորհիւ ան կը դառնայ էն. Պի. էն.ի հերոսը...





ԲԱՅԵՐԸ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ

● ԱՆՑԵԱԼԻՆ...

Բեթանոսական Բայաստանի մէջ Ամանորը եւ Վանատուրը այգեգործութիւնը, պտղաբերութիւնը, հացաբոյսերը եւ բերքը հովանաւորող աստուածներն էին, որոնց տօները կը տօնէին գարնանամուտին եւ կամ ամրան ընթացքին, Օգոստոս 1-6 (Նաւասարդ):

Ժամանակի ընթացքին մեր Ամանորը՝ Նոր Տարին, փոխաճ է իր թուականը, եւ այսօր մենք պայն կը տօնենք 31 Դեկտեմբերին:

● ԻՆՉՊԻՍԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵԻՆ ԲԱՅԵՐԸ...

Բայկական լեռնաշխարհը շատ ընդարձակ է: Այս ընդարձակութեան եւ տեղերու հեռաւորութեան պատճառով ամէն մէկ շրջան տարբեր ձեւով կը դիմաւորէր Ամանորը:

-Կաղանդը այն տօնն էր,

որուն ընթացքին գերդաստանը կը հաւաքուէր նահապետին (ընտանիքի ամէնէն տարեցին) մօտ: Տօնախմբումը կը սկսէր երգերով եւ պարերով, կը ճոխանար առատ սեղանով, որմէ ետք կը կազմակերպուէին խաղեր, մրցումներ, կը հարցուէին հանելուկներ եւ կ'արտասանէին ոտանաւորներ: Իսկ տան փոքրերը մտիկ կ'ընէին մեծ մայրիկին հեքիաթները:

Կարգ մը գիւղերու մէջ կէս գիշերին մարդիկ կ'ուղղուէին աղբիւր, ջուր կը խմէին եւ իրենց կուժերը կը լեցնէին «նոր» ջուրով:

-Բայկական սեղանը ճոխ էր. տանտիկինը կը պատրաստէր ծիտապուրի տարբեր տեսակներ, չոր միրգեր, շարոց, ընկոյզ, կաղին շագանակ, չոր թուր եւ անուշապուր: Ան իր սեղանը կը վարդաբեր պտուղ-



Ալին Ուրֆալեան (Յ տարեկան, Ապգ. եղիշէ Մանուկեան)

ներու վրայ դրուած մոմի լոյսով:

-Տօնախմբութեան ատեն երգիքներու լուսամուտներէն կը կախէին յատուկ նախշերով գուլպաներ, որոնց մէջ տանտիկինը կը վետեղէր չոր միրգեր, ընկոյզ, շագանակ. ասոնք վերապահուած էին պատանիներուն, որոնք գիշերը կը շրջէին երգելով եւ կը հաւաքէին «նուէր

ուտելիքներ»:

-Վարանդայի մէջ սովորութիւն կար ճաշերու ծիւղերը կարմիր լաթի կտորներով եւ թելերով պարզաբերու՝ ի նշան ուրախութեան:

-Նոր Տարուան յաջորդ օրը հայերը նոր պզեստներով

Ճար.ը՝ էջ 6

ՏԱՐԲԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



● Աշխարհի բոլոր կողմերը Քրիստոսի ճնունդը ընդհանրապէս կը տօնեն ընտանիքով, կերուխումով եւ նուէրներու փոխանակումով: Յաճախ մարդիկ Ա. Ծննդեան կէս գիշերը կը դիմաւորեն իրենց շրջանին եկեղեցիին մէջ:

Սակայն կան իւրայատուկ սովորութիւններ:

Ներկայացնենք անոնց մէկ մասը.

● Աւստրալիոյ մէջ Քրիստոսի ճնունդը կը տօնեն Դեկտեմբեր 24ի գիշեր: 25 Դեկտեմբերին Կաղանդի իրենց ճաշացուցակին մաս կը կազմեն հնդկահաւը, խոզապուխտը, եւ ճովային կենդանիներ եւ անշուշտ՝ քոնեաքի մէջ թաթխուած կաղանդի կարկանդակը:

Այս բոլորը ճաշակելէ ետք ավստրալիացիները ովկիանոս կը նետուին՝ լողալու եւ մարսելու...

● Լեհաստանի մէջ 25 եւ 26 Դեկտեմբերին արձակուրդ են... 24 Դեկտեմբերի երեկոյեան լեհերը շատ թեթեւ կ'ընթրեն, շատեր նոյնիսկ ճոմ կը պահեն, սակայն 25 Դեկտեմբերին փառաւոր կերպով կը ճաշեն: Իրենց սեղանին բացարձակապէս

չի դրուիր միս, այլ միայն՝ ձուկ եւ 12 տեսակ աղանդեր, որոնք կը խորհրդանշեն 12 առաքեալները:

● Իրլանտայի մէջ Ա. Ծնունդին նախորդող 12 օրերուն արդէն տօնական մթնոլորտ կը ստեղծուի, իսկ տօնը կ'երկարի նաեւ 26 Դեկտեմբերին, որ Ա. Ստեփանոսի տօնն է:

Իրլանտացիները եւս կ'ուտեն հնդկահաւ ու խոզապուխտ, որոնց կ'ընկերանան գետնախնձորի վանապան տեսակներ: Անոնց ավանդական անուշեղէնը, սալորով եւ քոնեաքով պատրաստուած կարկանդակի տեսակ մըն է:

● Սպանիոյ մէջ, եւրոպական բոլոր երկիրներուն նման, Յիսուսի ճնունդը կը տօնուի 24 Դեկտեմբերին, որուն նախօրեակին կը շինեն մսուրը՝ իր բոլոր մանրամասնութիւններով: Սակայն սպանացիները իրենց նուէրները կը փոխանակեն Յունուար 6ին, որովհետեւ այդ օրն է, որ մոգերը այցելեցին Յիսուսին եւ անոր նուէրներ տուին:

Երեխաները ընթրիքէն առաջ կ'այցելեն տունները, կ'երգեն եւ նուէրներ կը հաւաքեն:

Սպանացիները տօներու նախօրեակին իրենց տուններուն մէջ կը դնեն մեծ ափսէով քաղցրեղէններու տեսակներ, իսկ Դեկտեմբեր 24ի ընթրիքին անոնք կ'ուտեն հնդկահաւ, ոչխարի միս, ճովային կենդանիներ եւ անուշեղէններ:



● Ուրբանիոյ մէջ միայն վերջին 9-10 տարիներուն է, որ կը տօնեն Նոր Տարին եւ Ա. Ծնունդը, որովհետեւ խորհրդային տարիներուն բացարձակապէս արգիլուած էր նման տօներ կազմակերպել:

Ուրբանիոյ մէջ Նոր Տարին կը դիմաւորեն ընտանիքով եւ բարեկամներով: Ծնունդէն քանի մը օր առաջ ճմապահութիւն կը սկսի եւ կ'երկարի մինչեւ Ուղղափառ եկեղեցոյ Ա. Ծնունդը՝ 6 կամ 7 Յունուար: 6 Յունուարի գիշերը ընտանիքներ կը հաւաքուին եւ եկեղեցի կ'ուղուին:

Նուէրները կը փոխանակուին Նոր Տարուան օրը, իսկ Կաղանդի ճաշը տուններուն մէջ կը մնայ մինչեւ 19 ունուար:

Երկու տօներու պարպային, ճաշացուցակը բոյսերով պատրաստուած պէտք է ըլլայ, որովհետեւ ճոմապահութիւնը կը շարունակուի, մինչեւ որ առաջին աստղը երեւի (7 Յունուար):

● Փղոսկրեայ Ափունք մէջ (Բարաւային Ափրիկէ) Նոր Տարին եւ Ա. Ծնունդը բոլորին համար է. ըլլան քրտոնեայ կամ ոչ, որովհետեւ կը խորհրանշէ նուէրներու փոխանակում, տօնախում, կերուխում եւ արձակուրդ...



ԿԱՊԱՆԴԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՈՂ ԶԱՐԴԵՂԵՆՆԵՐ

● ԶԱՆԳԱԿՆԵՐ

Շատ հին ժամանակ
վանձակները կամ ձայն հա-



նող գործիքերը ընդհան-
րապես չար լզիկները հեռու
կը պահէի մարդոցմէ:
Ձմեռնային փռատօներուն,
վանձակներն անկանոն
ձայները, այ լուրջ պատ-
ճառին կողքն, կը ստեղ-
ճէին ուրախ տրամադրու-
թիւն եւ մթնորս:

Ձանձակուաղմուկ հա-
նելու սովորները ժամա-
նակի ընթացքն կը մոռ-
ցուի, որպէի մարդոց
ականջները.. հանգիստ
ընեն: Սակայն վանձակներու
կանոնաւոր ձները եւ մա-
նաւանդ եկեղիներու վան-
ձակներու ձները այսօր
եւս կ'աւետեն օները:

● ԳՈՒԼՊԱՆ

Կրակարան վրայ գու-
պայ կախելու սովորները
եկած է 1800-ական թուա-
կաններուն պատահած
պատմութենէ:



Ժամանակին աղքատ
մարդ մը կալոր ունէր
երեք աղջիկ: Անոնց տրու-
ողովհետեւ օծի էր կրնար
պատրաստել այց: Սուրբ
Նիքոլաս կ'իկայ այս
մարդուն պատիւը եւ
գիշերով ծխնելոյ կը նե-
տէ երեք ուրամներ,
որոնք կ'իյնան ակարա-
նին վերեւ կախած գու-
պաներուն մէջ: Լպաները

հոն կախուած էին չորնալու
համար...

Այս դէպքը պատճառ կը
դառնայ, որ գուպայ կախե-
լու սովորները տարածուի
ցամաքամասէ ցամաքամաս:
Աւելի ուշ հոլանտայի մէջ
երեխաները կը սկսին իրենց
տախտակէ կօշիկները դռնէն
դուրս դնել՝ նուէր ստանալու
յոյսով:

● ԿԱՊԱՆԴԻ ՔԱՐՏԵՐՈՒ ՊԱՏՏՈՒԹԻՒՆԸ

Կաղանդի քարտ դրկելու
սովորները այնքան տա-
րածուած է, որ դժուար է
հաւատալ, թէ ան ունի հա-
րիր տարուան կեանք:

Անգլիացի Սըր հանրի Քոլ



առաջինն է, որ պաշտօնա-
կանացուց այս քարտերը,
1843 թուականին: Ան շատ
գրադած մարդ մըն էր եւ
ժամանակ չունէր պատրաս-
տելու կաղանդի քարտեր,
ուրեմն որոշեց վանոնք
տպել: Արուեստագէտ Ճոն
Քալքոթ հարսի գծեց քար-
տի օրինակ մը եւ ճնաւ կա-
ղանդի առաջին քարտը: Ան-
կէ տպուեցաւ հազար օրի-
նակ եւ իւրաքանչիւրը ծախ-
ւեցաւ մէկ շիլինկի: Քար-
տին վրայ կար տօնական
մթնոլորտի մէջ եղող ընտա-
նիքի մը նկարը, այլ նկարի
մը մէջ մարդիկ բարեգոր-
ծութիւն կ'ընէին: Քարտին
վրայ գրուած էր «Ծնորհա-
ւոր Ա. Ծնունդ եւ ուրախ Նոր
Տարի բոլորիդ»:

● ԿԱՊԱՆԴԻ ԿՈՃՂ

Կաղանդի կոճղը հին
աւանդութեան մը շարունա-
կութիւնն է: Ձմրան ցուցտ
օրերուն կոճղ այրելու սովո-



րութիւնը կը խորհրդանշէր
գարնան բերելիք տաք եւ
արեւոտ օրերը: Մարդիկ
նաեւ կը հաւատային, որ
կոճղ այրելը բախտաբեր է
եւ վայն այրողը կը պաշտ-
պանէ վտանգներէ: Աւելի ուշ
շատեր նոյնիսկ կը հաւա-
տային, որ կաղանդի կոճղէն
ելած բոցը կը խորհրդանշէ
Դրախտի լոյսը:

Նոր Տարուան խարոյկը
վարելու համար ընդհանրա-
պէս կ'օգտագործուի նա-
խորդ տարուան մնացած
կոճղի կտոր մը՝ տարիներու
շարունակականութիւնը
խորհրդանշելու համար:

● ՌԱՊԱՂՈՒԹԵԱՆ ԲՈՅՍԸ

հին հռոմէացիները կը
հաւատային, որ այս բոյսը



կախարդական յատկութիւն-
ներ ունի եւ կը խորհրդանշէ
խաղաղութիւնը: Պատերապ-
մի ատեն, երբ վինուոր մը
ինքսկիւր այս տերեւներուն
տակը գտնէր, անմիջապէս
կը դադրեցնէր կռիւը եւ այդ
օրուան համար վինադադար
կը յայտարարէր:

Այս տերեւներուն ժողովըր-
դականութիւնը շարունակ-
ւեցաւ յայտնապէս Անգլիոյ եւ
Միացեալ Նահանգներու մէջ:

հին սովորութեան համա-
ձայն, կաղանդին այս տե-
րեւներուն ծիւղը կը կախուի
դրան վրայ, եւ անոր տակէն
անցնողները կամ տակը կե-
ցողները պէտք է համբուր-
վին:

ԿԱՊԱՆԴ ՊԱՊԱՆ ԲԱՄԱՅԱՆՑԻՆ ՎՐԱՅ

Գիտեմ որ կը սիրես համակարգիչը,
մանաւանդ հետաքրքրուած ես
համացանցով, ես ալ նման հետաքրքր-
ութիւններ ունիմ, սակայն չեմ չափա-
վանցեր եւ կը փորձուիմ օգտուիլ այս
բոլորէն ու գիտութիւնս աւելցնել: Օրի-
նակ, շատ հետաքրքիր էի գիտնալու,
որ համացանցին վրայ արդեօք կա-
ղանդ պապուկը կայք մը հաստատած
է: Սկսայ պրպտել եւ հետաքրքրական
նորութիւններ գտայ: Ձեզի կը փոխան-
ցեմ իմ գտած կայքերս...

Այս կայքերուն մէջ պիտի գտնէք հե-
տաքրքրական տեղեկութիւններ կա-
ղանդ Պապային մասին, խաղեր, ճա-
շերու ճաշեր պատրաստութեան ձեւեր,
նաեւ կրնաք այս կայքերուն միջոցով
կաղանդ Պապային գրել եւ նոյնիսկ
դրկել շնորհաւորական քարտեր:



- <http://www.santaclaus.com>
- <http://www.norad.org>
- <http://www.clause.com>
- <http://www.crafterscatalogs.com>



- <http://www.santaclaus.com>
- <http://www.joyeuse-fete.com/joyeux-noel>
- <http://www.vivenoel.com>
- <http://www.pere-noel.com>



ԻՍՏԵՆՈՒԿ

Երկու սիրուն քոյրիկներ
 Բլուրով են բաժնուներ,
 Կ'անցնին օրեր տարիներ
 Անոնք պիրար չեն տեսներ:

Կը քալէ, ոտք չունի,
 Կը վարնէ, ձեռք չունի,
 Կը ցաւցնէ, մատ չունի,
 Կը հաշուէ, խելք չունի:

Արտ մը ունիմ սպիտակ
 Ձեռքերովս կը ցանեմ,
 Աչքերովս կը հնձեմ:

Փուշեր ունի, բայց վարդ չէ,
 Միշտ կը խաղայ վուարթ չէ,
 Բերան ունի, չունի ձայն,
 Ջուրի խենթ է, ի՞նչ է այն:

ՍԱՐԻՆ ԱՐՈՅԵԱՆ
 Զ. Դասարան
 Ազգ. Ս. Խանամիրեան վարժ.

ԺՊԻՏ

Կաղանդի շրջան էր, դատաւորը ուրախ տրամադրութեամբ
 կը հարցնէ բանտարկեալին:
 Դատաւոր.- Ի՞նչ յանցանքով ամբաստանուած ես:
 Բանտարկեալ.- Կաղանդի գնումներս կանուխ ընելու
 յանցանքով:
 Դատաւոր.- Բայց այդ մէկը յանցանք չէ, որքա՞ն կանուխ
 սկսար ընել գնումներդ:
 Բանտարկեալ.- Ծա'տ կանուխ, երբ վաճառատուները չէին
 բացած իրենց դռները...

ԻՍՏԵՆՈՒԿ ԵՆ ...

Ճարունակուած՝ 4րդ էջէն

Կ'ուղղուէին եկեղեցի, որմէ ետք գիւղերու եւ գաւառներու մէջ տե-
 դի կ'ունենային խրախճանքներ, աշուղները կ'երգէին սապի ընկե-
 րակցութեամբ, ժողովուրդը կը պարէր եւ նուէրներ կը փոխանակ-
 ուէին:
 ● ԻՍԿ ԻՒՄԱ...
 Ներկայիս մեր Նոր Տարուան տօնախմբումները խառնուրդն են
 հինէն մեզի հասած կարգ մը սովորութիւններու, ժամանակի ըն-
 թացքին փոխուած նորութիւններու եւ ներկայի մեր ապրած եր-
 կիրներու ժողովուրդներէն առնուած բարձրերու:
 - Բայերը Նոր Տարին կը տօնեն 31 Դեկտեմբերին. առաքելա-
 կան եւ աւետարանական յարանուանութիւնները Ծնունդը կը տօ-
 նեն 6 Յունուարին, իսկ կաթողիկէները՝ 25 Դեկտեմբերին:
 Բայերը ընդհանրապէս իրենց ընտանիքներով կը տօնեն այս
 տօները: Նոր Տարուան ճառը, Կաղանդ Պապուկը, նուէրներն ու
 կերուխումը անբաժանելի մասն են Նոր Տարուան: Ճաշացուցակը
 փոխուած է, սակայն չոր միրգերը, շագանակն ու կաղինը, ինչ-
 պէս նաեւ երգն ու պարը միշտ ներկայ են...
 Ձեզի կը մաղթենք ուրախ տօներ եւ, ինչպէս Սիւնիքի ժողո-
 վուրդը կ'ըսէ՝ «Տարին առատ կարմիր օրերով» ըլլայ ձեզի հա-
 մար:

1) + դն - + - + - 2 + - + +

- ար =

2) + աէր - +

- է =

Գրէ՛ իւրաքանչիւր նկարին անունը, ապա՝ սառերու
 գումարումն ու հանումը ընելով գտի՛ր բութը:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝
 bezdlg_mezdlg@hotmail.com
 կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ի
 խմբագրութեան, «ԱԶԴԱԿ»
 «Ճաղպոյեան» կեդրոն

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն Ապրիլի
 Ճաբաթ, 21 Դեկտեմբեր 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԱՄՍՈՒԱՆ ԻՍՏԵՆՈՒԿ

Կրնան մասնակցիլ Յէն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը
 ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»-ի իբրագրատուն:
 Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շաղիին անունը:
 Ան պիտի ստանայ նուէր մը:

ԻՍՏԵՆՈՒԿ ԹԻՒ Թ

1.- Վարանդայի մէջ ինչչա՞ն ճառերու ծիղերը կարմիր
 լաթի կտորներով եւ թելերով կը վարդարւէին

2.- Սպանապիները իրենց նուէրները եր կը փոխա-
 նակեն-----

3.- Կրակարանին վրայ գուպայ կախելու սովորութիւնը
 երբ սկսած է -----

Անուն - Մականուն -----
 Վարժարան -----
 Ծննդեան թուական -----
 Բեռնաձայնի թիւ -----

ԻՍՏԵՆՈՒԿ ԹԻՒ ԾԻ ԾԱԲՈՂ

Բարցարան թիւ ԾԻ շահողը Սանտրա Մինասն (11 տարեկան
 «Աքսոր Գասարճեան»էն) շահեցաւ անցեալ տարուան մրցումը:
 Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ապրիլ»էն, «Ճաղպոյեան» կեդրոն:



ՁԻՆՆԵՄԱՐԴՈՒ ՄԵ ԻՐԱՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երբ Ձիւնմարդը շինեցին, վերջացուցին գիւղին մանուկները ջուրջը պարեցին, եւ երբ մութը իջաւ, ամէն մէկը իր տունը վերադարձաւ:

Յանկարծ ձիւնմարդը արթնցաւ, լեսաւ մօտակայ լեռը, կամայւկ մը ինքզինք ապատեց ձիւնն եւ սկսաւ բարձրանալ: Ծատ մութ էր, երկինքը սեւ է: Ծուռով լուսինը դուրս ելաւ ամպերուն տակէն: Ձիւնմարդը սկսաւ քալել անտառին ետքէն: Ծառերը չինք տեսան, րոպհետեւ տակաւին չէին քացած: Ծնունդի գիշեր էր. այդպիսի հրաշալի բաներ տեղի կունենային եւ ոչ ոք կ'ուզէր քննալ: Ծշուկ մը լսուեցաւ. ճառին էին, որոնք կը խօսէին.

— Ով է եկող գիշերուան այս ժամուն...

— Կարծես կաղանդ Պապան է...

— Ո՛հ, կաղանդ Պապան տարբեր գլխարկ կ'ունենայ...

— Խաղալիքներու տոպրակ կ'ունենայ...

— Օհ, Ձիւնմարդն է...


— Ուր կ'երթայ... Ի՞նչ կ'երթայ... Ի՞նչ կ'երթայ, — պարմացան ճառերը:

Յետոյ՝ ոչ մէկ ձայն: Ձիւնմարդը արդէն հեռու էր՝ բարձր տեղ մը կեցած: Լերան սառեցնող ցուրտ հովը չինք զօրացուցած էր. ինքզինք ուժով եւ երջանիկ կը վազէր:

Գիտէք, թէ ո՞վ անցաւ այդ գիշեր իր քովէն կաղանդ Պապան, որ իր ջջապտոյտը կ'ընէր խաղալիքներ բաժնելով: Ան պարմացած կեանք.

— Ահա ձիւնմարդ մը. ինչ կ'ընեն հոս:

— Ի՞նչ տար չի կաղանդ Պապա, կը սիրեմ ինչ ընկե-



րանալ, — ըսաւ Ձիւնմարդը:

— Ես գիւղ կ'երթամ, հոն օդը շատ մեղմ է քեզի համար եւ ամէն տունի մէջ կրակ վառած են. դուն կը հալիս: Բայց եկուր ինձի հետ մինչեւ այս ծամբուն անկիւնը: Ինչ կայ խեղճ հիւղակ մը, որուն լոյսը դեռ չէ մարած:

Անոնք ելան հիւղակին տանիքը եւ նայեցան ճիւղերու վրայ: Աթոռի մը վրայ, գրեթէ մարած կրակի մը մօտ, կար խեղճ ճերուկ մը, որ կը մտածէր տխրօրէն: Անոր կօշիկները դրուած էին վառարանին առջեւը. կարծես կաղանդ Պապայէն նուէր կը սպասէր: Ձիւնմարդը ճռեցաւ անկի լաւ տեսնելու համար եւ յանկարծ ճիւղերուն ու գլխարկը ինկան ծիշդ կօշիկներուն մէջ:

Ծխամորձը չոր ձայն մը հանեց, ճերուկը տեղէն ցատկեց, չորս կողմը նայեցաւ, ոչ ոք կար... յանկարծ կօշիկներուն մէջ տեսաւ...: Ծատ ուրախ առաւ ճիւղերը, վառեց պայն եւ գլխարկը դրաւ:

Արդեօք իր մանկութեան օրերու կաղանդ Պապան

եկած էր: Ծերուկը ինքնիրեն ժպտեցաւ:

Ձիւնմարդը ընկերացաւ կաղանդ Պապային մինչեւ այն խաչածեւ ծամբան, ուր ցուրտ հով մը կը փչէր: Սիրեց այդ հովը:

— Ես հոս կը մնամ, — ըսաւ ան, — ա՛յ ոչինչ ունիմ տալիք:

— Միշտ բան մը ունինք տալիք, — պատասխանեց կաղանդ Պապան. — նոյնիսկ՝ մեր հոգիէն, որովհետեւ ես քեզի ալ նուէր մը տուած եմ: Քեզի սիրտ մը նուիրեցի:

Ձիւնմարդը չհասկցաւ կաղանդ Պապային ըսածը: Ամէն բան նորութիւն էր իրեն համար: Ա՛յ չմտածեց, որովհետեւ անկի կարծրացաւ եւ շատ անկի լաւ պզայ այդ ցուրտ օդին:

Քանի մը ամիս ետք ցուրտ հովը գնաց կորսուեցաւ: Անոր տեղ եկաւ մեղմ հովը եւ երգեց.

— Գարուն է, գարուն է...

Օր մըն ալ Ձիւնմարդուն երկու փայտէ թելերը փրթան եւ ինկան: Ոտքերէն ջուր սկսաւ հոսիլ: Զգայ, որ պիտի

հալէր:

— Անկի վեր կրնաս ելլել, — ըսաւ լեռը: — Իմ գագաթիս վրայ ամբողջ տարին ձիւն կայ:

— Օհ, — մրմնջեց Վեփուրը, — մեղք, այնքան ջուրի կարիք կայ... դաշտերը ջուրի պէտք ունին:

Այն ատեն Ձիւնմարդը պզայ, որ սիրտ մը ունի: «Միշտ բան մը ունինք տալիք», յիշեց կաղանդ Պապային ըսածը:

Ձիւնմարդը հալեցաւ առանց նեղուելու եւ գիւղին մանուկները այլեւս չինք չտեսան: Աղջնակ մը այդտեղէն անցած ատեն հաւաքեց սեւ փայտի երկու կտորներ՝ կրակ վառելու համար:

Կը կարծէք, թէ Ձիւնմարդը մեռած է:

Երբե՛ք. ան միայն փոխուած է: Անոր մարմինը վերածուեցաւ այն մաքուր պաղ ջուրին, որ կ'իջնէ լեռներէն, իսկ անոր երկու փայտէ թելերը վառեցին այն կրակը, որ տաքցուց պստիկ աղջկան մատները...

